

ՉԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մէկ ծաւրով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՒԿ

Ծանոցանակ ըստ  
20 սանթիմ



ԼՐԱՓԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆԵ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՅԷ

Redaction du journal

„Ipravunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иправункъ

ВАРНА

Գրութեանը եւ լեզուի  
տրուի

ԿՈՎԿԱՍԻԱ

Կովկասիոյ թաթար բնակիչներու շուրջը կրկնակ զրոյց մը կը պտտուի. այն է նախ այն մեծ բարեհաճութիւնը որով Մոսկովեան կառավարութիւնը կը վարուի անոնց հանդէպ, և երկրորդ, անշուշտ միևնոյն փոխադարձ ոգով, այն անսահման հաւատարմութիւնը, զոր, ամէն պարագայի մէջ, Կովկասիոյ միւսլիմանները կը հաւատեն. Ձարին խնամակալ կառավարութեան, եթէ այդ առիթին զրոյցին հաւատք կընծայուի պատճառը սա է որ, այդ երեւոյթ ըսած են խնդրագրի մը մէջ. Գալով երկրորդին, սրտի տէր կին մը, որ Մակտա նէսման կը ստորագրէ, չարաչար կը ձաղկէ Բեքիպուրիսի վէտովսի լրագրին մէջ, Շարք մը հարցումներով նացոյց կուտայ ոչնչութիւնը այս անհեթեթ զրոյցին, զոր միապետութիւնը իր խաւարոյն քաղաքականութեան կնճառտ պէտքերուն համար կը թողու որ ծաւալ գտնէ:

Տաղստանի նուաճումէն եւ Զէչէններու երկրին խաղաղացումէն յետոյ, կը հարցնէ հեղինակը, ի՞նչ պէտք էր 100,000 հոգինոց բանակ մը պահել Կովկասիոյ մէջ: Արդեօք վախ կար թէ կապտամարին հայ և վրացի ժողովուրդները, որոնք այն հաւատքն ունէին թէ ռուսերը քրիստոնէութեան ախոյեաններն են միւսլիման մոլեռանդութեան դէմ ու կը կասկածին 4 միլիոն մահմետականներուն հաւատարմութենէն, որոնք թիւրք և պարսիկ կրօնակիցներուն հետ անդադար ծուռ աչքով կը նայէին իրենց վրայ: Այս երկու երկիրներուն հետ պատերազմներու միջոցին ի՞նչ հարկ կար այնքան պահապան զօրքեր պահել Կովկասիոյ քաղաքներուն մէջ: Արդեօք արգելք ըլլալուն համար է քրիստոնէայ ժողովուրդներուն, որոնք յաղթականներուն հետ միշտ յառաջ խաղացած են: Զլմաբիտ է որ, այս պատերազմ

ներու միջոցին, իշխանութիւնները միւսլիման տարրերէ բաղկացած անկանոն ձիւար խումբեր կազմած են, բայց ի՞նչ նշանակութիւն ունի պատերազմի զաշարին մէջ գտնուած բանակին օգնական ճարեւժ համար է թէ, այս անհանգարտ պատերազմիկները ձեռքի մէջ ունենալով անոնցմէ ապահով ըլլալու և ի հարկին վանոնք պատանգ պահելու նպատակով:

Գալով այս յանպատրաստից կազմուած խումբերուն հաւատարմութեան, նոյն իսկ թշնամիին դէմ գործի սկսած վայրկենին, ռուս-թուրք և ռուս-պարսիկ պատերազմներուն տարբերութիւնները և այս պատերազմներու մէջ գտնուած շատ մը զինուորներու պատմութիւնները բաւական շինիչ տեղեկութիւններ կուտան մեզի: Ահաւասիկ մի քանի դէպքեր:

1853 ին Բէհրութով իշխանը չարաչար կերպով քաւել տուաւ միւսլիման ձիւարներու երեք անկանոն խումբերէն մնացողներուն այն մատնութիւնը որով այս խումբերէն մէկ մասը յանցաւոր գտնուած էր, Պայան տուրի ճակատամարտին մէջ, անվախ կերպով թուրքերուն կողմը անցնելով, Բեհրութով քրիստոնէայ զինուորներով պաշարել տուաւ այս թշնամիները և զանոնք շատ մօտէն երկաթի կըտորուանքներով լեցուած թընդանթի բռնելու հրաման տրուաւ:

Վերջի ռուս-թուրք պատերազմին տեսն, նմանօրինակ մատնութեան մը պարագային, Տաղստանի միւսլիման գունդը պէտք էր յար և նման պատիժ մը կըրէր. բայց ազատուեցաւ շնորհիւ Լազարէվի միջամտութեան, որ խոստում տուաւ այս լեռնականներէն որպէս զի ապագային բարի գործով իրենց այն յանցանքը դարմանեն:

Թուրքները լսելուն պէս խմբովին ապստամբեցան: Միևնոյն յոյսերով կողբաւրէին միւսլիմանները վերջին 1877-1878 ռուս-թուրք պատերազմին տեսն, երբ Տաղստանի մէկ մասը ապստամբեցաւ, և խուժեց Տաշկալար, Տէրպէնտ և Բուխարա նահանգը: Ապստամբութիւնը սահմանափակուեցաւ ու ճնշուեցաւ «անհաւատարիմ» հայ և վրացի, ներկայացուցիչներուն Մեշիքովի, Չալչալմաի և Տէր-Ասուատուրովի միջոցով և քրիստոնէայ բնակիչներու կտրովի գործակցութեամբը:

Ո՞վ չի գիտեր թէ զօրավար Շէրէմէթիվի վարչութեան տեսն, կառավարութիւնը Կովկասցիներու ձեռքերէն զենքերը առնելու հարկին մէջ զգայ ինքզինքը, երբ միւսլիման ժողովուրդը շարունակ չարագործութիւններ կընէր, և որուն ամենէն աննուաճ տարրերը երկիրը կասկատակէին և բազմաթիւ աւազակային հրոսախումբեր կը կազմէին հոչակաւոր Գէրիմի զեկավարութեամբ . . .

Իրաց այս վեճակը սակայն մինչև այսօր կը շարունակուի տարբեր ձևով:

Երկրորդ կալիցիին վարչութեան օրով է որ իշխանութիւնները ընդունած են իրենց արդի քաղաքականութիւնը, որ է աչք գոցել միւսլիմաններու զինուորուն և զինաթափ ընել հայ ժողովուրդը որ Կովկասի ռուսական տիրապետութենէն ի վեր, միշտ յառաջադիմութեան եւ քաղաքակրթութեան զօրավիգ կանգնած է:

Ասկէ զատ, արդար ըլլալու եւ թաթարները չքմեղելու համար պէտք է ըսել, թէ անոնցմէ հաւատարմութիւն պահանջել գէպի քրիստոնէայ կառավարութիւն մը, կը նշանակէ գրեթէ անկարելի բան մը պահանջել: Ոչ սակաւ բարոյական կապեր տակաւին զանոնք թուրքիոյ կամ Պարսկաստանի կը կապեն: Ամէն միւսլիմանի պէս, թաթարներն ալ խորապէս համոզուած են իսլամի քրիստոնէութենէն գե-

րիւեր ըլլալուն, և խաչին մահիկին հպատակելու օրինաւորութեան վրայ: Այս է սակայն բոլոր յետագէտ ժողովուրդներու պարագան. որոնց քով ազգային զգացումը կրօնական նախապաշարումներով զօրացած է:

(Էսթրէն)

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այնչափ հետաքրքրութեամբ սպասած ծարձի պայմանները յայտնուեցան վերջապէս. ծարձիի գլխաւոր պատուիրակը Գալուստ Գոք պահարանի մը մէջ յանձնեց Մ. Վիթէի իր վեհապետին տասնապանայ պահանջները պարունակող պաշտօնագիրը:

Ահա այդ պահանջները  
Ա. Պատերազմին ծախքերը հատուցուին:

Բ. Սախալին կղզին բոլորովին ձառնի թողուի:

Գ. Լիւսո-Թունիի թերակղզին ձառնի վարձուի:

Դ. Մանչուրիան բոլորովին պարպուի եւ նոյն տեղը Ռուսիոյ ունեցած բոլոր իրաւունքները ծարձի տրուին:

Ե. Չին վաւերացնէ Մանչուրիոյ մէջ բաց գոտի քաղաքականութիւնը:

Զ. Արեւելեան Չինու երկաթուղին, Խարպինէն վար, ծարձիի թողուի, իսկ Վլադիվոսթոք տանող մասը Ռուսերուն ձեռքը մնայ:

Է. Բորէայի վրայ ծարձի թեւաբերութիւնը վաւերացուի:

Ը. Սիպիւրիական եղբայրները Վլադիվոսթոքի հիւսիսային կողմը ձգկնորսութեան իրաւունք տրուի ծարձիներուն:

Թ. Օտար նաւահանգիստներ ապաստանած ռուսական մարտանաւերը ծարձի թողուին:

Ժ. Մայրագոյն Արեւելքի ջուրերուն մէջ Ռուսիոյ ծովային զօրութիւնը սահմանափակուի:

Պայմաններու յայտնուելէն անմիջապէս յետոյ տիրող կարծիքը այն է թէ Չարը խիստ ծանր նկատելով այդ պահանջները չպիտի ընդունի ու պատերազմը պիտի շարունակուի իսկ ծարձիի իրենց տարած ծովային եւ ցամաքային յաղթութեանց զայն նուազագոյն հատուցումը նկատելով պիտի յամարին իրենց պահանջներուն վրայ, եւ մերժողական պատասխան ստանալուն պէս, հաշ-



տու թեան բանակցութիւնը խզելով  
ճարտարական տորմիդը ճամբայ պի-  
տի հանեն դէպի Պալմիրի ծով :  
Անշուշտ դէպի Պալմիրի խիզա-  
խելը շատ յանդուգն քայլ մը պի-  
տի ըլլայ ճարտար կողմէ . բայց ա-  
սոնց խիզախ բնաւորութեան պա-  
տեհադմի սկիզբէն ի վեր վարժուած  
ըլլալով, ալ անհաւանական չենք  
գտնել անոնց կողմէ այդ օրինակ  
անդգնութիւն մը : Երբ Ռուսիա իր  
խարխուլ նաւերը Պալմիրիէ մինչեւ  
Եւֆրատ, Արեւելք զրկել համարձակե-  
ցաւ գերաւորով թէ թշնամիին ու-  
ժեղ տորմիդը զանոնք ջանջախիտե-  
կը սպասէ հոն . ինչու ճարտար վա-  
րանի զբիւր իր նոր եւ կատարելա-  
գործեալ նաւերը դէպի Պալմիրի ուր  
թշնամիին զինք արգելող ոչ ինչ չու-  
նի ծովուն վրայ :

Պ Ա Լ Թ Ի Կ Ի Խ Ն Դ Ի Ր Ը

Անգլիական հսկայ նաւատորմիդին  
Պալմիրի ծովը երթալով հոն մար-  
զանք եւ ռազմափորձեր կատարելու  
որոշման լուրը Գերմանացիները այ-  
լայլեցուց . գերմանական մամուլը ի-  
րենց դէմ ցոյց մը նկատեց Անգ-  
լիոյ այդ որոշումը . բացառաւորութիւն-  
ները սկսան երկու աղբիւրաւորութեանց  
կողմէ : Անգլիական թերթերը յոխոր-  
տացին գերման կայսեր վերադրուած  
այն նպատակին դէմ թէ նա կուզէ  
Պալմիրի ծովը փակել օտար պետու-  
թեանց առջեւ . եւ պնդողներ եղան  
իսկ թէ վերջին անգամ Վերլինի  
նոյն ծովուն վրայ Ձարի հետ տե-  
սակցութեան մէկ գլխաւոր կէտը  
Պալմիրի փակման խնդիրն էր : Այս  
մասին յարեցուած եւ գեռ շարու-  
նակուող աղմուկին դէմ պաշտօնա-  
կան ոչ մէկ հերքում չը լսուեցաւ  
Գերմանիոյ կողմէ : Այս լուրերի-  
նը կատարած աւելի կը զօրացնէ  
եւ ա' քրոշակէս կլսուի թէ Վեր-  
լինի կայսրը կը ձգտի Պալմիրի ծո-  
վին գերմանական լիճի մը գերապա-  
րանքը տալ :

Ինչպէս որ աշխարհագրական քար-  
տէզը ցոյց կուտայ, Պալմիրի ծովը կե-  
զերեն Գերմանիա, Ռուսիա, Տանիսա-  
րա եւ Շուէտ : Վերջի երկուքը փո-  
քոր պետութիւններ ըլլալով, նշա-  
նակութիւն չունին Գերմանիոյ առ-  
ջեւ, Ռուսիա եւ այժմ իր նաւային  
ուժէն բոլորովին զրկուած ըլլալով,  
հոն տիրապետող պիտի հս'դրուա-  
նայ գրեթէ միայն Գերմանիան :

Անգլիա, որպէսզի զգացնէ թէ չպի-  
տի ներքէ Գերմանիոյ այդ տեսակ  
քայլ մը առնել, իր հսկայ նաւա-  
տորմիդը հոն կը զրկէ այժմ մար-  
զանքի պատուակին տակ :

Սակայն Անգլիոյ այս որոշման  
մէջ ուրիշ կանխահոգ խորամանկու-  
թիւն մըն ալ կը նշմարուի . եւ  
ո՞վ չը գիտեր թէ Անգլիա միշտ մէկ  
հարուածով երկու թաշուն զարնել  
կը սիրէ : Տեսնենք թէ ինչ է այս  
երկրորդ խորամանկութիւնը :

Լոնտոնի մէջ գիտեն թէ ճարտար  
կողմէ առաջարկուելիք պայմանները  
ծանր պիտի թուին Ռուսիոյ, որուն  
վերահայեցող այդ պայմանները լսելէ  
առաջ փութելով հետ տե-  
սակցութեամբ մը անոր աջակցու-  
թիւնը ապահովել իրեն այն պարա-  
գային որ ճարտար դէպի Պալմիրի  
խիզախելու փորձ մը ընէ երբ ասոր  
պայմանները ինք մեծէ : Անգլիա  
կանխատեսեց թէ իրեն զինակից ճա-  
րտար տորմիդին դէմ կրնայ Գեր-  
մանիոյ կողմէ դաւադրութիւններ սար-

քուիլ անոր ճամբուն վրայ եւ Պալմիրի  
մէջ . եւ որպէսզի մօտէն հսկէ ու  
չէզոքացնէ Գերմանիոյ աջակցութիւ-  
նը Ռուսիոյ, փութեց Ձարին ու  
Վերլինիին տեսակցելու օրերուն իսկ  
տարածախել թէ իր նաւատորմիդը  
Պալմիրի պիտի զրկէ մեծ ռազմա-  
փորձ մը կատարելու համար :

Հետեւաբար Անգլիա իր այս որո-  
շումով թէ Պալմիրի փակման մը-  
տադրութեան դէմ իր սպառնալիքը  
ցոյց տուաւ . Գերմանիոյ եւ թէ իր  
զինակից ճարտար տորմիդին ճամ-  
բան ապահովեց դէպի Պալմիրի . եւ  
ո՞վ գիտէ գեռ ինչ գիւրգիւթներ  
պիտի կրնայ ընծայել այդ միջոցաւ  
Անգլիան ճարտարական տորմիդին, ինչ  
որ չը զլացաւ Պրանսա իր ուսու գիւնակ  
ցին մինչեւ անոր տորմիդին  
Մատակարարէ մեկնումը :

ԲՈՒԴՊԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մ Ե Ս

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

— 0 —

«Ինձի եկուր, ստրկեցնեմ  
կեանքի շուրջ առաւ-  
ստեղծութիւն փոխուելու  
վարդապետութիւնը»

Բուդղաւն

ՓՈԽԱԲԵՐԱԲԱՐ

«Եկա՛յք առ իս առե-  
նայն վաստակաւ հօր  
իմոյ, եւ ես համ-  
գրուցի զձեզ»

Աւետարան

(Շար. նախորդ թիւէն)

Այս է բուդղայական բացատրու-  
թիւնը : Աշխարհը՝ ապերջանիկ է ու  
բովանակել կեանք ունի, որովհետեւ  
չը տեսնել թէ, ինչ բանի ձգտելու  
է որ չունենայ կեանք, փոփոխութիւն,  
խառնակութիւն . զգոնութիւն եւ  
մահ, այլ միմիայն խաղաղութիւն—  
Մեծ խաղաղութիւն : Հոն է չուկե-  
տը յորում մարդ պարտի ձգտել :

Տես բուդղայական հայեցողու-  
թիւնը որչափ կը տարբերի քրիստո-  
նէական հայեցողութիւնէն : Գրիստո-  
նէութեան մէջ երկու կեանք կայ  
ներկայ եւ հանդերձեալ : Ներկայ  
կեանքը գէշ է, որովհետեւ սատանա-  
յի գերիշխանութեան տակն է—մարդ,  
անասուն եւ սատանայ : Հանդերձեալ  
կեանքը գեղեցիկ պիտի լինի, որով-  
հետեւ Աստուծոյ թագաւորութեանը  
տակ կը գտնուի եւ սատանան հոն  
չէ կարող ներմուծել :

Բայց բուդղայականութիւնը կը  
ճանչնայ միմիայն մէկ կեանք, —  
«կեանք մը մշտնջենականութիւնէ ելած»,  
որ կրնայ շարունակուիլ մշտնջենա-  
պէս, քանի որ կեանքը գէշ է, ու-  
րեմն բոլոր շարունակութիւնն ալ  
գէշ է . եւ երջանկութիւնը կրնայ  
բնակիլ միայն խաղաղութեան մէջ,  
հեռի այս տաղտուկ տառապանքներէն  
նիւթ ուրեմն մարդ մը երջանկութեան  
կը փախդի — եւ ինչպէս որ բոլոր  
հաւատքներու ալ բաղձաքանդ նպա-  
տակն այս է — պիտի ձգտի խաղաղու-  
թեան միմիայն : Այս դժուր գաղափար  
մը չէ հասկնալու համար : Ինձ այն-  
քան պարզ կը թուի թէ, կեանք  
տղայ մը իսկ լսէ մէկ անգամէն կա-

բող է հասկնալ : Ձեռք բեր թէ,  
հաւատաւ եւ հետեւիր, այլ հասկնալու  
հաւատքը տարբեր բան է : Օրէնքը  
խոր է, դժուար է գիտնալ եւ անոր  
հաւատաւն : Շատ վաղ է, եւ կրնայ  
հասկնալի լինել միմիայն լուրջ  
խորհրդածութեան միջոցներով : » Ու-  
րովհետեւ բուդղայականութիւնը տը-  
ղայական կրօն չէ այլ խելահասնե-  
րու : (\*)

Այս պատճառաւ բուդղայական  
վարդապետութիւնը յոռետեսութիւն  
նկատուած է : Խորհէ՛, ինչպէս մենք  
կը խորհինք . հաւատալ թէ կեանք եւ  
մահ ժխտական են, կեանքի աշխարհ  
գալը գեղեցիկ է, մահն ալ սոսկում  
մի է, մեզ հարկու կերելի խոր-  
հիլ թէ՛ ստուգել մեր իրական  
կեանքն է գէշն որ արժանախիլ պի-  
տի լինի, եւ այդ կեանքն ու մահը որ  
միմիայն բանն են : Բայց ճամբ-  
տութիւնը որ տեսնուեցաւ ասոնցմէ  
եւ հաւատացին անոր աշխարհու չէ  
այլ գեղեցիկ : Երբ սրբէք ձեր աշ-  
քերը մարմնային կեղծիքներէ ու  
դէմ յանդիման կանգնեք ճամբ-  
տութեան, լաւ կը լինի : «Օրէնքը  
քաղցր է, սիրտը ցնծութեամբ կը  
լնու : »

Ուրեմն, ըստ բուդղայականութեան,  
ստանալի նպատակը Մեծ խաղաղու-  
թիւնն է՝ ամէն տրամուծութիւնէ փրկելու  
կարող : Մարդս ձգտելու է դէպի  
խաղաղութիւն, յաջողելու կամ ոչ իւր  
սեպական ջանքերին կախում ունի :

Երբ մարդուն համար կորուշուի  
նպատակը, կը մնայ միայն ցոյց տալ  
միջոցները՝ ճամբան ուղիէ կարելի է  
նպատակին հասնիլ : Ինչ եղանակաւ  
կը մնայ խորհիլ եւ գործել մարդուն  
որ վերջապէս կարենայ երթալ Մեծ  
խաղաղութեան մէջ : Բուդղայակա-  
նութեան պատասխանը այս խնդրոյ  
մասին սա է, բարի գործեր եւ բարի  
խորհուրդներ . — ասոնք են աւագ  
դուռը որմէ միայն կարող էք մտնել  
ճամբուն մէջ : Լե՛ր, պատուաւոր եւ  
արդար, ազնիւ եւ կարեկից, ճամբա-  
տաւէր եւ ընդդիմադիր աներաւու-  
թեան, — այս է երջանկութեան առաջ-  
նորդող ճանապարհի սկզբնաւորու-  
թիւնը : (\*) Բարի արարէք միմիայն, ոչ  
այն պայմանաւ ձեզ բարիք ընել  
կարողներուն, այլ որովհետեւ այս-  
պէս անելով դուք ձեր հոգին բա-  
րիք կընէք : Լե՛ր, ողորմած եւ զթա-  
սիրտ, զի այս բաները մարդուն մը  
համար անհրաժեշտ են : Ի վեր ա-  
մենայն սովորէ սէր եւ համակրու-  
թիւն : Ձանա՛ զգալ ինչպէս ուրիշ-  
ները կըզգան, ջանա՛ զանոնք հաս-  
կնալ, ջանա՛ անոնցմէ համակրուիլ  
եւ սէրը պիտի գայ : Վստահաբար  
բուդղայական մը սրտին վրայ զըր-  
ուած էր, «Ամենուն հասկնալն, ամե-  
նուն ներել գիտնալն է . » Ձկայ բա-  
լասան սիրոյ նման, մարդու սր-  
տին համար, ոչ միայն ուրիշներուն  
դէպ առ ինքն ցոյց տրուած սէրն,  
այլ իրեն դէպի ուրիշները ցոյց  
տուածն : Սիրէ՛ ամէն բան, ոչ միայն  
քու ընկերներդ, այլ բովանդակ աշ-

(\*) Հակասող, « որ ծածկեցիր զայս  
յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցիր  
տղայոց»

Աւետարան

(\*) Այս տողերը գրեթէ կէտ առ  
կէտ համապատասխան են Գրիս-  
տոսի վարդապետութեան, զոր Բուդ-  
ղան յիշեալէն (60) տարի առաջ  
գարողած է :

խարհը՝ բոլոր արարածները որ երկրի  
վրայ կը շրջին, օդի մէջը՝ թռչուն-  
ները, խառին մէջի միջատները : Ա-  
մէն կենդանութիւն մարդուն հետ  
կապակցութիւն ունի : Մարդուն  
կեանքը ուրիշ կեանքէ բաժան չէ,  
այլ նոյնն է, եւ եթէ վարդ մը կու-  
ղէ իր սիրտը կատարելագործել  
օղբով, պարտի սիրուիլ եւ հաս-  
կնալ զինքը շրջապատող մեծ աշ-  
խարհ : Բայց մարդս պարտի միշտ  
յիշել թէ, ինքը պարտաւոր է ա-  
ռաջնութիւնն իրեն տալ : Ուրիշնե-  
րուն հանդէպ արդար ինչէլ առաջ  
քեզ հանդէպ՝ արդար ինչնու էս,  
ուրիշները՝ երջանկացնելու առաջ, նախ  
դուն զքեզ՝ երջանկացնելու ես, ու-  
րիշները քեզ սիրելու համար, նախ  
դուն սիրել պարտիս ուրիշները :  
Ձանա՛ դուն քու հոգիդ աւելի սի-  
րելի ընել տալ : Այս է Բուդղայի  
վարդապետութիւնը :

(Շարունակելի)

ՓՈՒԲՐՈԳՈՒԹԻՒՆՆ ԿԵ՛Ս

«ԻՐԱԽՈՒՆՔ»Ի ԴԵ՛Ս

Սիւրիստէյէ մեզ կիսմիջինն թէ Մա-  
նուկ Ակարի վշտացած ըլլալով իր  
մէկ ծիծաղելի գրութիւնը չը հա-  
տարակենս, սկսած է երկու ամիսէ  
ի վեր : Իր մէկ երկու արբանակ-  
ներով Իրաւունքի դէմ բերականու ը-  
նել եւ համոզել Սիւրիստէյի եւ չոր-  
ջակայ գիւղերու մեր բաժանորդնե-  
րը որ թերթերը ետ դարձնեն : Ար-  
դէն մի քանիներ անոր համոզու-  
լու միաժողութիւնը ունեցեր են :

Մենք խորհուրդ տուած էինք Մ.  
Ակարիին որ իր յարուցած վէճին  
քննութիւնը բանէ հասկցող երկու  
մարդու յանձնէ : Կը ցաւինք որ  
նա փոխանակ այս օրինական միջո-  
ցին զբնուել փոքրագրութեամբ մը  
դաւել սկսած է երկար տարիներ  
իր համակցած թերթին դէմ : Բայց  
իր համախոհները Մ. ի անցեալ ամիս  
մէջ վառնա գտնուելուն առթիւ Մ.  
Ա. ի գրասենակը կատարուած թիւ-  
ւարարական քննութեան արդիւնքը  
շատ բացորոշ կերպով ցոյց տո՛ղ  
թէ Մ. Ակարիի գրութիւնը նոյնն է  
թեմա՛ր հրատարակելու բնաւ յաճախ  
չէր եւ թէ Իրաւունքի խմբագիրը չա՛ն-  
դէպ՝ այդ գրութեան շատ զգաւա-  
մտօրէն վարուած է եւ այդպէսով  
ազատած Մ. Ակարուան իր հետ բա-  
տարագրողները հրապարակաւ ծիծա-  
ղելի դառնալէ :

Արդ, Սիւրիստէյի եւ չրջակայ գիւ-  
ղերու մեր բաժանորդները չը փա-  
րուելու համար Մ. Ակարիի եւ իր  
արբանակներու մեր դէմ լարելով վի-  
րած էն թերթերէն եթէ կը հետա-  
քըբորին՝ թող հաճին գիմել ուղղա-  
կի Մ. Ակարիի եւ անկէ պահան-  
ջել որ ցոյց տայ իրաւաբար Մ. Ա. ի  
այն նամակը որով պարզուած է քնն-  
ութեան արդիւնքը : Այդ կը բնուէ  
ցոյց տալու մեր նոր հակառակորդ-  
ներու անտեղի «փոփոխութիւն» մը  
անձնատուր եղած փոքրագրութեան  
աստիճանը :

Սա միայն աւելցնենք թէ Պուլկարիոյ  
մէջ որբային ամիսու կազմութեան ա-  
ռաջին նախաձեռնող «ԻՐԱԽՈՒՆՔ»ը  
երբէք պէտք չունէր այդ մասին  
Մ. Ակարիի հրահանգին եւ օրերու հա-  
մար կէս ֆրանք կամ 1 ֆր. վճա-  
րող հայու մը անունը թերթերու  
մէջ հրատարակուած տեսնելու փա-



առաջինը, թեև անհաշիվ փորձեր ան-  
րուծելու անհաշիվ փորձեր ան-  
ձառայել :

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅԻ ՇՈՒՐՋԸ

ՀԱՆԴԵՍԸ

Անօրինակ եւ դժբաղդ քննութիւնէ մը  
յետոյ, որո՞ք մասին անցնելու արեւմտեան  
սեպարատիստական քաղաքականութեան  
եւ տարեկան հանգեցողութեան արեւմտեան  
հայ վարժարանին :

Յանցանք արագութեամբ մը գրաւած  
էր եկեղեցւոյ մէջ քանի նստարան-  
ները եւ երկու երեք մեծապատիւներ  
ալ դասին մէջ անօրինակութեան կը նա-  
խադասէին : օրուան անգղաբան  
հանդէսին, դասին ալ ու ձախ կող-  
մերը աշակերտ եւ աշակերտուհի ման-  
կական անգլէս այլ հայկապոլ տնե-  
ջով կապաւորուելին կոչման մը որ  
իրենց դժբաղդ ճակատագիրը կը վրձ-  
նէր :

Հանգէսն սկսաւ, ինչպէս սովորու-  
թիւն է երգերով ու կրկին չնայ-  
խաբիկ արտասանութիւնն եւ  
բոլոր, այսինքն այն միեւնոյն ոտա-  
նաւորները կրկնութեամբ, որոնք  
օր առաջ իրր քննութեան նիւթ ծա-  
ռայած էին աշակերտներու ուսումնա-  
կան կարողութիւնը կամ վիճակը  
հրապարակելու համար, միեւնոյն ո-

տանաւորը, միեւնոյն աշակերտի կող-  
մէ թէ՛ իրր ցոլանիւ մը ուսանողի  
ձառքը կարողութեան իւր թէ՛ իրր  
հանգիստին իւր հրապարակեցաւ, հանդի-  
րակեցնելու, իսկ թէ՛ այդ ծածկուած  
ուսանաւորներու յաւուր պատշաճ  
վայելչութիւնն ինչ ատենի մը էր,  
այդ մասին խօսելն իսկ աւելորդ է :  
Այսպէս խղճալի ու արեւմտեան  
ձեւակերպութիւններու կատարումէն  
ետք ցցուեցաւ աշակերտներու մէջ  
դպրոցին աւագ ուսուցիչ պ. Բարսեղ  
Սարգս, եւ մի քանի չերտ թղթերու  
վրայէն այլաբան միտածականու-  
թեամբ ծանոյց հանդիսակալներուն  
վարժարանի տարեկան վիճակը մի  
տեղեկատուութիւն որ նուազ դաւե-  
տական եւ ծիծաղելի չէր քան արեւ-  
մած քննութիւնը :

Տեղեկատուութեան մասաւոր իմաս-  
տն էր, թէ՛ փառք Աստուծոյ Ա-  
ղէքանդերթ վարժարանը նիւթապէս  
չաւ հարուստ է, թէ՛ ծնողներէ ո-  
ւանք կը գանգատին վարժարանի  
մէջ գաղղիւրէն անցկիւրէն եւն.  
լեզուներ չը գտնուէին համար, թէ՛  
անցեալ տարւոյն մէջ վարժարանը  
չաւ յետադէմ վիճակ մը ունի եղեր  
բայց այս տարի հակառակը յառաջ-  
գիւրդ է ? Թէ աղքատ ուսանողներու  
ճաշ կը սրուի եղեր, թէ անցեալ  
տարւոյ մի քանի դպիւր թնրու-  
թիւնները յառաջկային դարձան-  
լու համար ամէն կանխագ միջոց-  
ներ այժմէն նախախառնուած ու վը-  
ճըռուած են եղեր, թէ երկու հոգա-  
րարներէն մէկը հաղիւ վարժա-  
րան կայեցել եղեր, իսկ միւս հոգա-  
րարուն ամէն օր վարժարանն է եղեր

եւն. — Ու այս ամենէ վերջ իր  
ապագայ յառաջդիմութեան ուսանող-  
ներուն կարգաց պ. Բարսեղ աշա-  
կերտներու կարողութեան ապագայ  
նախնայը, եւ ինչ, Աստուծոյ իմ,  
բոլորն ալ վերջին ատենի կարող  
վիճակի մէջ, բոլորն ալ Արիւստոտէլ  
դժբաժնէ քաջ, քաջալու, յոյժ քաջ,  
յոյժ քաջալու եւ ամենաքաջալու  
մակերեսներով մկրտեց բոլոր ուսա-  
նողները, որոց մէջ ոչ մի «տակար»,  
ծոյլ կամ միջակ» չերեւաց . . . ինչ  
կըսէք, պ. ընթերցողներ, այսչափ  
վրան բաց խելակաւորութիւն, այսչափ  
անկրթս ստ. խօսութիւն, զորս կ'ըն-  
պաս, հոգաբարձութիւնը արդար եղի  
նման իսկ ժողովրդեան հասկացող մասը  
չի խօսեցաւ եւ չի հասկացող մասը  
լուց :

Այս րաժնեցան մեր փոքրիկ  
«քաջալու» հերոսներուն իրենց տարե-  
կան աշխատութեամբ ամբարած գի-  
տութեան ի վարձ մրցանակներ. ու-  
կեզօծ մեծ մեծ գրքեր, գեղեցիկ եւ  
թաւալաւ կանաչի փոքրիկ գրքոց-  
ներ, կարկինի առփեր եւն. որոց  
ալժէքն է եղեր 80 անգլ. ոսկի, կը  
լսէ՞ք ատրեկան մրցանակի համար  
ու թ ու ուն ան գ լ ի ա կ ա ն ո ո կ ի  
եւ հազար չորս հարիւր ոսկի ալ  
պիտեմէ վասն ոչնչի :

(Գ. մասը յաջորդով)



Մեր դրութիւնը անտանելի էր. հը-  
րացանքներ որոտը, այրած տնե-  
րի խորտակումը, մարդկանց լացն  
ու կոծը, «եւ Ալլի» աղաղակները,  
կրակի նման դողում էին մեր սրը-  
տերը : Գերմանական ուժ էր պէտք  
տանելու այս բոլորը : Մենք թիւր-  
քեր թակարդում ընկած թռչուն-  
ներ էինք : Այդ պատճառով էլ  
նրանք ողբերգութեամբ իրենց գործի ա-  
ջողութեան վրայ իրենց սրտերը  
աւելի պարզօրէն էին թափում մեր  
առաջ : Պատմութեան, թէ ինչպէս  
նախնեանք խաները Պարսկաստա-  
նում թէյութեւ խանի քրդերին պատ-  
րաստել են յարմար ժամին ներս  
խուժելու կովկաս, օգտուելով այն  
դէպքից, որ Ռուսաստանի ուժերը  
Հեռաւոր Արեւելքում ջլատուել են :  
Եւ գովում էին նախնեանք խա-  
ներին, որոնց անխնայ գործնչու-  
թեան արգասիքն էր այդ բոլորը :

«Գիշերն անցկացրինք սարսափի եւ  
տագնապի մէջ : Միւս օրը կէսօրին  
արեւի շողի նման աւետարտ լուր  
թափանցեց մեր ապստամբած տան  
մէջ, թէ կարապետ վարդապետը եւ  
Նախնեանք քաղաքագլուխը Զափար  
Կուր՝ խանը՝ եղիւ ծն դերերին ա-  
զատելու եւ հայտնութիւն կրթելու  
հայերի եւ թիւրքերի մէջ : Աննկա-  
րագրելի էրաւ մեր ցնոթութիւնը :  
Շուտով մեզ մօտ եկաւ տանուտե-  
րը գիւղի մի քանի պատաւար թիւր-  
քերին եւ ստրաժնիկներու հետ եւ  
մեզ յայտնեց, որ եկել է գերինե-  
րին ազատելու : Մի թիւրք ստրաժ-  
նիկ այդտեղ տանախօսեց առաջ թէ  
տղամարդկանց չպէտք է բաց թող-  
նել, հազիւ են ձեռք ընկել, նրանց  
հարկաւոր է սպանել, իսկ կանանց  
եւ երեխաներին պէտք է բաց թող-  
նել : Բոլոր ներկայ թիւրքերն հակ-  
աբեցին դէպի այդ գեաւորութիւնը :  
Ոտաւ ստրաժնիկներն ոչինչ չհասկը-  
ցան : Իսկոյն տղամարդկանց բա-  
ժանեցին կանանցից եւ երեխանե-

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի եր-  
րորդ թիւը սկսած է կառուցուիլ :  
Հիւանդանոցը յանձնուած է ճար-  
տարագետ Տ. Լեւոն Կիւրէզեանի,  
ամբողջ ծախքն 2800 ոսկի պի-  
տի հատուցուի : Այս պատկառե-  
լի դումարը կը նուիրեն Տ.Տ.  
Յովհաննէս եւ Մարթէն Յա-  
կոբեան : Հիւանդանոցին միւս  
յարկաբաժիններն ալ ի մօտոյ  
պիտի կառուցուին, որոնց ծախ-  
քը պիտի տան Տ.Տ. Աբիկ եւ  
Մարթեա Ունճեան, և Պատրիկ  
Կիւրէզեան եւ եղբարք :

— Հապէշ իշխան զօրավար Մա-  
շաշիա Երուսաղէմ գաղած ըլլա-  
լով Տէր Յարութիւն Պատրիար-  
քին ներկայացրեալ Մենելիկ  
կայսեր շնորհակալութիւն յայտ-  
նող մէկ նամակը ու իբր նուէր  
ձեռքի խաչ մը յանձնեալ է Նո-  
րին Սրբազնութեան :

— Ս. Էջմիածնայ Սինոդը կարգ-  
մը ամուսնալուծութիւններ վըճ-  
ուեր եւ վերստին ամուսնու-  
թեան արտօնութիւն տուեր է  
մէկ քանի կիներու որոնց ա-  
մուսնութիւնը պետական դատա-  
րանով յմահ բանտարկութեան  
կամ առաքանութեան աշխատու-  
թեան դատապարտուած են :

ԻՆՔՆԱՊԱՅԵՄԱՆ ՆՍՅԵՐ

ՋԱՆՈՒՆ ԴԻԻՂԻ ԿՈՏԱՐԹՈՐԸ

Թիֆլիս, 2 յունիս

Անգլիայի եւ Զառնի գիւղի կո-  
տորածի մանրամասները : Անա թէ  
ինչպէս նկարագրուած են այդ ալիա-  
նախնեանքի մէկը :

«Մայիսի 12-ին, առաւօտեան, դա-  
տարանի առաջ խմբել էին գիւղի  
հայերը եւ թիւրքերը, որոնցից առա-  
ջինները խորհրդակցում էին զնալ  
գիւղի նոր ժամանող փոխ-նահան-  
գապետին՝ թիւրքերի յուզւած մտքե-  
րը խաղաղեցնելու եւ սպառնացող  
վտանգի առաջն անհետ համար :  
Գիւղի առնուաժէրը եւ մեր հարեւան  
Ասադ Հաջի-Աբի-Կալաօղլին մեզ ա-  
նային :

Ամօթ է մեզ համար, քննեցէք խա-  
նութիւնը բաց արեք, մենք հօ մի-  
ռած չենք որ խոսվութիւնն ծագի  
հայերի եւ թիւրքերի մէջ, մեզա-  
նում այդպիսի քաջ չի ծագի եւ  
չպէտք է էլ ծագիլ քանի որ միմեանց  
հետ ոչ մի վէճ, ոչ մի հակաա-  
կութիւն չունենք, մենք դարաւոր  
եղբայրներ ենք, սիրով ապրել ենք  
եւ սիրով էլ կապրենք միմեան վերջը,  
մենք պոլիթիայի առաջ ստորագրու-  
թիւն կը տանք ձեզ, որ երբ ձեր  
մի մազը պակսի, մենք պատաս-  
խանատու ենք : Դեռ չէի վերջա-  
ցրել նախաճաշս, երբ լսեցի հրա-  
ցանքի պայթիւններ, լաց ու կծ  
աղմուկ աղաղակ : Չէնց այդ րոպէն  
վերոյիշեալ Ասադ Հաջի Աբի Կալաօ  
օղլին մեր դուռը ծեծեց եւ մեզ  
ու մեր հարեւաններին տարաւ իրենց

«Ինչ, Անցաւ 15 րոպէ. Բայրամ-  
օղլի, Մաշադի-Ալի մոլլա Անգէթ օղլի  
եւ Դոնայ այդ Ասադը՝ զինուած արիւ-  
նտ սրերով եւ հրացաններով ներս  
մտան եւ տղամարդկանց զոյգ-զոյգ  
դուրս քաշեցին տանից : Թշուառ  
գերիները դուրս չէին դնում եւ  
կարծես ընդդէմ հասկանում էին,  
որ իրենց կիսաբը իր վերջալուսին  
է հասել : (Չօտով դուրս քաշեցին  
Աբիւնոտ սրերի շողողները, զոհե-  
րի լացն ու աղաչանքը, զանիւնների  
Ֆանտաստիկական հագուստը, զլիւի-  
ների կարմիր ֆէսերը, կարմիր ծա-  
պաւններով զարդարած թագուկ-  
ները՝ մահաւան սպաւորութիւն էին  
թողնում մարդու վրայ : Եւ չարա-  
ւոր լիաթաթեմ) օգտուելով այդ ի-  
րարանցումից, զանիւնների գլուխը զո-  
հերի հետ զբաղւած լինելուց, կա-  
մացուկ տանից դուրս ծլկեցի. երբ  
մտոյ ծառերին մէջ, քայլերս արա-  
գացրի եւ հասայ գետին, որ հեռու  
չէր այդ սպանողանոցից ու այդտեղ  
չարչաւս դէն չարեկից : Հեռուց ծա-  
ռերի արանքից անսայ, որ տանու-  
տէրը առաջին անգամ սուրը իրեց  
Միսակ Տէր. Անգէթի կողմ. միտցած-  
ները գնդակահար արին միմեանցին,  
մի քանիգին էլ կտոր կտոր արին  
եւ այսպէս բոլոր տղամարդկանց  
մահացին ամենատուրապիսի կերպով.  
Նրանց ոտներինք քաշ ձգալով՝ նե-  
տում էին մօտիկ փոսը : Եւ գետի  
միջով վազեցի դէպի սարաժնիկնե-  
րու պոստը : Հեռուց մի քանի  
գնդակներ սուրալով սեցան կողքո-  
վում, եւ անհետացայ անտառների մէջ  
եւ այդպիսով գլուխ ազատեցի . . .

Կոտորածի հէնց առաջինները մեր  
տանից թալանած ապրանքները տա-  
րան յեղեալ Ասադ Հաջի-Աբի-Կալաօ  
օղլու տունը : Թիւրքը կանանց ու-  
րախութեան եւ հոգեցիկ չափ չկար,  
օրհնում էին խաներին եւ բեկերին,  
մաղթում էին նրանց արեւշատութիւն,  
որ պատճառ գարձան իրենց հարս-  
տանալուն : Եւ այդ բոլորը ոտի-  
կանութեան քթի տակ . . .

(ԴՐՈՇԱԿ)



ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Սուլթանը հօտիւրմէք գասթը իւէ հուսուլա կէլմիշ օլան վա-

—Մաքթնիս «Տալիլի թէշ- քիլաթը» նամ գամիթէնին օրկա-

—Հիւքիւմէթին թէքզիպի խի-

Պու խուսուստա մէմուր գըլը-

ՐՈՒՍԻԱ

Բէթէրհով սէրալընտա գա-

—Ենի գանուննամէի իլան ի-

—Բօլոնէզ վէ ֆինն միլլէթի-

էրի կիպի, Ռուսիայէր տալի

Ռուսիայէր Ռուսիա 21 մի-

Ռուսիայէրին, եանի Մալա-

—Լօցտա իշտիլէր պիր պէօ-

Մ Ո Ւ Հ Ա Ր Ե Պ Ե

Ճարօնըն սուլ՝ թէքիլիթի-

—Բօրթմուտտան օգոստոս 1

զէրինէ ճարօնըն հիմայէսինի

էն էնէմիլիթի թէքիլիթի,

ՁԻՆՏԷ ԻԻԹԻԼԱԼ

Քայ-Բէնկ-Ֆուտտան վարիտ օ-

Ձինտէ ըսեան իտէնլէրին էֆ-

ՄԻԻԹԵՆԷՎԻԷ

Աճէմ շահը բազար էրթէսի

Ամէրիկա մալլէրինի սաթըն

ՍՕՆ ԹԵԼԷԿՐԱՖԻԱ

Թիֆլիս 1 օգոստոս

Վարանցով-Տաշքովըն պիր ֆո-

ԹԻԻՔԶԱՐԻՅԷ

Table with exchange rates for various currencies and goods, including gold, silver, and different types of oil.

ԸՆՏԻՐ ՔԱՅԱԼԻ

Ձուտ խաղողէ պատրաստուած քնա-

Դուրսէն մեծաքանակ յանձնարա-

ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍԱԳԵԱՆ

Փողոց Գօլոնի թիւ 65 ՎԱՌՆԱ

Одговорникъ А. Курбетянъ